

*Le più grandi cose nascono dal
sangue!*

*Il sangue dei martiri è l'aurea
della nazione futura.*

Venizia, 6 luglio 1916

Gabriele d'Annunzio

ՄՈՒՐԱՏ-ՌԱՓԱՅԷԼԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՈՍԿԵՄԱՏԵԱՆԷՆ

ՄԵԾԱՄԵԾ ԳՈՐԾԵՐԸ ԱՐԻՒՆԷՆ ԿԸ ԾՆԻՆ:

ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒ ԱՐԻՒՆԸ ԱՐՇԱԼՈՅՍՆ Է ԱՊԱԳԱՅ ՑԵՂԻՆ:

ՎԵՆԵՏԻԿ, 6 Յուլիս 1916

ԿԱՊՐԻԷԼԷ ՏՄԱՆՈՒՆՑԻՈՅ

ՄՈՒՐԱՏ-ՌԱՓԱՅԷԼԵԱՆ ՎԱՐԺ-Ի ՁՈՀԵՐՈՒՆ

ՄՈՌՅՈՒԱԾ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ ԻՍՐԱՅԷԼ ՏԽՐՈՒՆԻ

Ապրիլեան Նահատակներու շարքին, մեր մտաւորական հոյլը՝ փայլուն աստղ մ'ալ կորանցուցած է աքսորի ճամբաներուն վրայ. անձանթ ու մոռցուած բանաստեղծ մը, որ սիրած է կեանքը՝ խանդավառ երգներով, հիւսած է իր զարունները վարդերու, յաւիկներու փթթումով, ու կեանքի կարօտը սրտին մէջ՝ յանկարծ օր մը կը լսէր ոստիկանի մը խապոտ ձայնը, որ զինքն ալ կը կանչէր իրեն հետեւելու: Պէտք էր ցմիշտ լքել կեանքը, Վոսիորը, երկասարկ զարունները:

Զինքն ալ պիտի խառնէին մտաւորականներու խումբին. ծանօթ անուն էր ԻՍՐԱՅԷԼ ՏԽՐՈՒՆԻ. քերթուածներ, յօդուածներ զրած էր զանազան թերթերու մէջ, կուսակցական դործիչ եղած էր սահմանադրութեան օրերուն...:

Կը խորհիմ թէ մեր ներկայ դրագէտներէն շատ քիչեր լսած պիտի ըլլան իր անունը, մոռցուած բանաստեղծ մը զարակներու մէջ մնացած, գեղնորակ թերթերու մէջ, եւ աւա՛ղ, արիւնոտ յիշամեակ մը պիտի դար զինքն ալ կանչէր. — Ելի՛ր յարութեան լոյսով, արամութեան երգիչ:

Իր իրական անունով ԱՐԻՍ ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ծնած է 1885ին, Կիւմիւլէզանէ գիւղականին մէջ: Հայրենակից է Վենետիկի միաբան Հ. Մանուէլ Զախլախեանին, որուն անունը կապուած է Հայերէնէ-Իտալիէն ընտիր բառգիրքի մը:

Արիս ունեւոր ընտանիքի զաւակ էր. իր պապերը շինած են նաեւ ծննդավայրին Ս. Աստուածածին եկեղեցին:

Իր նախնական ուսումներն անշուշտ ըստացած է Կիւմիւլէզանէի Մեսրոպեան վարժարանին մէջ. իր վրայ ամէնէն շատ

ազդեցութիւն դործած են վայրի բնութիւնը, ծաղկաւէտ ձորերը, մանաւանդ հիւթեղ պտուղները:

Քաղիլ խնոր, դեղձ, բուլ ու նուռ ոսկեհատ:

Հակառակ որ Կիւմիւլէզանէն, երբեմնի Արծաթիկը, կռթնած ժայռի մը՝ չոր եւ բարբարոս գիւղ մը ունէր, բայց իր ոտքերուն կը փռուէին կանաչ դաշտեր, այգիներ եւ պարտէզներ, ուր պատանի Արիսը կ'անցընէր ուրախ կեանք մը: Հերիսը կ'անցընէր ուրախ կեանք մը: Հեռուն՝ հին վանք մը կար, այգիներուն մէջ, ուր ուխտի կու դային Կարինէն, Բարբերէն ու Տրապիզոնէն. շարաթներ կը մնաւին Ամենափրկիչ վանքի պարտէզներուն մէջ: Թէպէտ Տրապիզոնի նահանգին մէջ էր գիւղականը, բայց ճամբաներու վրայ. իր պտուղները մինչեւ Ռուսաստան կ'արտածէր, իր արծաթի հանքերն աղքատօրէն շահագործելու համար:

Անշուշտ իր գիւղին ծխական դպրոցը պիտի չգոհացնէր ծնողքին փափաքը՝ իրենց զաւակին բարձր կրթութիւն եւ ուսում տալու համար: Մօտ էր Տրապիզոնը, հազիւ 25-30 մղոն հեռու, ուր կը գտնուէր Վենետիկի Հայրերու Միութեան վարժարանը. 1896ին Արիս Իսրայէլեան կը մտնէր այդ դպրոցի սեմէն ներս:

Հոն երեք տարի մնաց՝ միջնակարգ դպրոցն աւարտելու համար. իր դասընկերներէն մէկ հոգի ողջ է, Պ. Մկրտիչ Շահնապարեան (Փլովտիւ), որուն չնորհակալութեամբ կը պարտինք այս համառօտ ծանօթութիւնները: Երկու անբաժան ընկերները, 1899ին, Տրապիզոնի վարժարանին տեսուչ Հ. Յակոբ Տիրոյեանի կարգադրութեամբ՝ կ'անցնին Վենետիկ, Մուրատ-Ռափայէլեան վարժարանը: Հոն չու-



Խրաչյէ ՏՅարցյան

տով պիտի դար Դ. Վարուժանը, վստահ թէ իսկոյն զերար ըմբռնեցին. երկուքն ալ բանաստեղծական խմոր ունէին, սիրահար հայ լեզուին եւ գրականութեան՝ պիտի զարգանային կարող ուսուցիչներու խնամքին տակ: Վենետիկը պիտի ներշնչէր բանաստեղծական հոգի, դոյն եւ դեղեցկութիւն պիտի տար դաւառի այդ պարզ հոգիներուն:

Ուշիմ պատանի էր, ինչպէս կը հաստատէ իր դասընկերը, եւ երեք տարի ետք Արիւս կ'աւարտէ լիկէոնի դասընթացը: Կ'անցնի Ֆրանսա, հոգադործութեան դիտական ճիւղին հետեւելու համար. ո՛վ զիտէ ինչ ծրարներ ունէր. թերեւս Կիւմիւզանէն բարձրացնել եւրոպական մշակութեան աստիճանին:

1904ին բաժնուկով Մ. Շահնազարեանէն՝ անցաւ Ամերիկա. անշուշտ իր սիրած վայրը պիտի ըլլար Պոսթոնի Հայրենիք շարժաթերթին խմբագրատունը, ուր ազդուած մթնոլորտէն՝ մտաւ Հ. Յ. Դաշնակցութեան շարքերը: Նոյն ժամանակի երիտասարդներուն գաղափարական էր, մէկ կամ միւս կուսակցութեան փառելի՝ հայրենիքի ազատութեան համար պայքարելու: Եւրոպան եւ Ամերիկան շատ

բաներ ըսած էին իրեն. տեսած էր ազատ երկիրներ, մարդկային իրաւունք, ընտանեկան պատիւ եւ սեփականութեան սրբութիւն: Ո՛րքան տարրեր իր ծննդավայրէն, ո՛րքան փափաքելի երազներ՝ ազաւայ հայրենիք մը կերտելու:

Իսրայէլեանի միակ եւ զերազոյն նպատակն էր Հայաստանի ազատութիւնը: Ընկերակալական տաք շրջանին ան խաղերէնէ թարգմանեց Եմբիկոյ Ֆերրիի ՍՈՅՍԼԻԶՄԷՆ ԵՒ ԴՐԱՎԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ, Պոսթոնի «Հայրենիք»ին համար (1909), որ հրատարակուեցաւ քանի մը մասերով:

Երբ Վոսիորի տիներուն վրայ, «Հիւրիթ, հիւրիթ» պոռոյց հայը, անոր ձայնը մինչեւ Ամերիկա հասաւ եւ Խրաչյէն՝ Սիւմանթոյի պէս թռաւ Թուրքիոյ մայրաքաղաքը (1910), այս անգամ ԱԶԱՍՄԱՐՏԻ շուրջ խմբուելու, ուր պիտի գտնէր ոչ միայն Դ. Վարուժանը, այլ բազմաթիւ հայ գրողներ, կազմելով հոգեկան միութիւն մը:

Արիւս Խրաչյէեան ուրախ բնաւորութիւն ունէր, սրամիտ էր եւ շատ ընկերական, զեղեցկադէմ երիտասարդ մը, սիրող արդուզարդի, եւ պերճախօս՝ հանրային հաւաքոյթներու մէջ: Ինքն ալ անգամ էր Մուրատ - Ռափայէլեանի նախկին Աշակերտներու Միութեան եւ Ամսօրեայ տեղեկատու թերթին աշխատակիցներէն:

Կ. Պոլսոյ մէջ զբաղեցաւ նաեւ ուսուցչութեամբ, Նշան-Թաշի մէջ, ուր Հայրիկեան ոմն հիմնած էր Արդի վարժարանը, անշուշտ հայերէն եւ հայ գրականութիւն աւանդելու համար:

Խանդավառ էր միշտ կուսակցութեան գաղափարականով եւ Եւրոպայի մէջ նոր ծայր տուած ընկերակալական վարդապետութեամբ: Բնական էր թէ ճնշուած երկրի մը զաւակը՝ զոհարերողի եւ նահատակի հոգի մը պիտի ունենար, այդ թանձրամիտ աշխարհին մէջ լոյս սփռելու համար: Աւա՛ղ, իրեն պէս շատերուն ազնւական ջանքերը ապարդիւն պիտի մնային, ժայռերու վրայ սերմանած ցորենի նման:

Եկաւ առաջին համաշխարհային պատե-

րազմը, փախուեցան աշխարհի վրայ նախող դուռ ու պատուհան: Ոչ մէկ բարեգութ ձայն, ոչ մէկ միջազգային ոյժ պիտի կասեցնէր աքսորն ու ջարդը. եւ Խրաչյէ Տիւրուհի մտաւորականներու խումբի հետ քշուեցաւ դէպի Չանդլի, ապա անգամ իսկական Տիւրուհի մը, ազաւայ համար խաչուած առաքեալ մը տութեան համար խաչուած առաքեալ մը (11 Մարտ, 1916) բոկոտն ու մերկ, առանց յոյսի եւ միտքարութեան:

Ինքն ալ, Վարուժանի նման, աքսորի ճամբաներուն վրայ քերթուածներ գրեց, կարապի վերջին երգը, որ կը յիշէ անցած դարուները, ոսկի աշունները, որոնք իր սիրտը կը կարդային: Եւ ինքը պիտի երթար դէպի Անժամօքի ուղիւ, որ ոչ ոք կրցաւ հասկնալ:

Լուրդորդի պէս երբեմն արեան ծովի ալիքներէն դուրս ելաւ եւ դարձեալ սուղուեցաւ անդունդներուն մէջ, միլիոնաւորներու նման, առանց զերեզմանի, առանց անունի, մնաց անծանօթ տեղ մը, թողնելով քանի մը քերթուածներ, յիշատակ ձգելով Արեւմեքով ի հոգի մը:

ԳՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Հակառակ որ Խրաչյէ Տիւրուհի ներշնչուած բանաստեղծ էր եւ հասած էր գրական բարձր աստիճանի մը, սակայն դեմքով խոստարար քանակով շատ քիչ են իր թողած գործերը: Երկար ուսումնասիրութիւն մը Սոցիալիզմի մասին, թարգմատութիւն մը՝ որ այժմէութենէ ինկած է, նութիւն մը՝ որ այժմէութենէ ինկած է, Ամերիկահայ գաղութին վրայ երկարաւուց յօդուած մը, ճառեր եւ 30ի չափ քերթուածներ, մեր ձեռքն հասած են: Կա՛ն արդեօք մեզի անծանօթ քերթուածներ՝ լրագիրներու կամ թերթերու մէջ, չենք գիտեր:

Եթէ Վարուժան կամ Սիւմանթո աւարտեցին իրենց գրական արտադրութիւնը, տեղին իրենց գրական արտադրութիւնը, անձ Տիւրուհի իր հոգեկան տենչերուն, անձ նախկին յուշերու եւ սրտի զգացումներուն

մէջ մնաց, չունեցաւ որոշ ծրարիւր՝ հատորներ հանելու: Միթէ չէ՞ր հաւատար իր տաղանդին, թէ՛ կուսակցական քարոզչութիւնը իր թանկագին ժամանակը խլեց: Յայտնի է թէ իր քերթուածները պատահական զգացումներու արդիւնք են, փոքրիկ կեանքի մը ազդեցութիւնները, ուր մեծ դեր կատարած են չրջանակն ու բընութիւնը:

Իրապա՛շտ էր, խորհրդապաշտ՝ թէ վիպապաշտ. եւ չեմ հաւատար այս բաժանումներուն. ամէն բանաստեղծ ամբողջութիւն մ'է մարդկային տենչերուն եւ ըզզացումներուն: Բանաստեղծ ու թիւնը կեանքի իմաստասիրութիւնն է, եւ Արիւս, առանց մեծ բառերու, առանց արուեստական ձեւերու, գրած է իր սրտին թելադրածները: Տխուր իր խորքին մէջ, վշտի երգիչ մը, որ փոխանակ արշալոյսն երգելու, արեգակին մահը կ'երգէ, որ սուգ ու խաւար կը տեսնէ իր շուրջը, եւ հոգին կը տառապի համամարդկային ցաւերով:

Աշխարհիս վրայ չկայ կատարեալ երջանկութիւն, եւ քանի մահ կայ՝ ամէն զեղեցիկ երեւոյթ անցաւոր է, մեռնող արեգակի նման: Բանաստեղծն է որ զեղեցիկ իմաստասիրութեամբ կը վերլուծէ տառապանքը, կ'իջնէ անոր խորը՝ յոյս եւ լոյս փնտռելով. հուսկ յուսարեկ եւ չքած երազներով կ'ըմբոստանայ բնութեան գէժ. առանց խորհելու թէ վիշտն ու մահը մարդիկ ստեղծեցին, մարդիկ՝ որոնց

Բոլոր տեղեքն անյոյս են...

Ուր բիրտ կիսմիջին կպումներէն կ'արիւնին յունգերն, յոգնած, վիրաւոր:

Անոնք որ կ'ապրին կեանքին խաբուսիկ երեւոյթներով եւ անցաւոր հաճոյքները երջանկութիւն կը համարին, չեն ըմբռնիր կեանքին իմաստասիրութիւնը. դադաղ մը կամ գերեզման մը պիտի յիշեցնէ՝ թէ ապրիւն փչոտ ու տաժանելի ճանապարհ մ'է, որ կը տանի դէպի մահ:

Իսրայէլ Տիւրուհի, հակառակ իր զբարթ բնաւորութեան, խորքին մէջ խաչուած մ'էր Գողգոթայի ճամբուն վրայ. ոչ մէկ քերթուած՝ ուր բանաստեղծին հա-

